



ԵՊԻՉԱԲԻ ՊԱՏՄՈՒԹՅԵՆ ԲՆԵԴԻՐԸ

1764 թուին կ. Պօլսում լուս տեսաւ Եղիշէի պատմութեան անդրանիկ տպագրութիւնը. Ան օրից մինչև ներկայս նոյն երկը 21 անգամ հրատարակուեցաւ. Լուս տեսան նորա աշխարհաբառ և օտարակեղութ թարգմանութիւնները, հայերէն և ալլակեղու համառօտ և ընդարձակ տեսութիւններ, ուսումնասիրութիւններ և ալլն. Որքան և միսիթարական են ազգային և օտար բանասիրութեան առաջ բերած ալս արդիւնքները, չէ կարելի ոսկալն շխոստովանել, որ Եղիշէի պատմութեան մինչ ցալս ծանօթ օրինակների մէջ մի բաց տեղ մտում է. Ակդ բաց տեղը նորա հինգերորդ լեզանակն է.

Խնչալէս լալտնի է, բոլոր տպագրութիւնների մէջ եօթն լեզանակներն և սարտաքոլ նօթն լեզանակիո ութերորդն էլ կան. կարծես նոքա ալդպէս և կազմուած են եղել և կրում են հեղինակի նշանակած հարազատ խորագիրը. Սակալն զրչեալ օրինակների օգնութեամբ կարելի է համոզուել, որ տպագրի և ձեռագրի մէջ ալդ կողմից սերտ համաձայնութիւն չկալ. Դոնէ ալս են ցոլց տալիս մեր ձեռի տակ եղած փաստերը.

Բանն ալս է, որ ս. Էջմիածնի մատենադարանում մեղ պատահնել է ստուգել ութն զանազան գրչեալ օրինակներ և դիտել ալն, որ բոլոր ութի մէջ էլ միշտ մի լեզանակ պակաս է. թէս մեղ ծանօթ բնագիրն անթերի կար. Ալսպէս՝ հինգ օրինակ չունին Ս. լեզանակ, երկու օրինակ Զ. լեզ. և մէկ օրինակ Ը. լեզանակ. Անա նոցա համառօտ ցանկը, թուահամարները ո. Էջմիածնի մատենադարանի ցուցակինն են.

- | | | |
|------------|--------|---------------------------|
| 1. թ. 1687 | դրուած | 1174 թ. |
| 2. թ. 1657 | — | 1570 թ. |
| 3. թ. 1625 | — | 1641 թ. |
| 4. թ. 2463 | — | 1672 թ. |
| 5. թ. 1381 | — | 1674 թ. |
| 6. թ. 1683 | — | անթուական |
| 7. թ. 524 | — | նոյնակ |
| 8. թ. 1685 | — | 1207 թ. չունի Ը. լեզանակ. |

Եթէ ախաղէս է, ինչ ունին ուրեմն պակաս տեղում լիշեալ զրչնալ օրինակները: Նոցանից մէկը՝ թ. 2463 Դ. լեզանակից լիտոլ ունի փոխանակ՝ Յէրդի՝ 2^{1/2}, թերթ բաց տեղ, երեսները բոլորովին մաքուր, իսկ թ. 1625 նոյն տեղում լուսանցքի վերալ տնի ալս նկատողութիւնը. «Եւ լաւսմ տեղուջ զբնթերցոյն (sic) մի ցնորի վասն հինգերորդ լեզանակին, զի օրինակն ոչ կար, և մող ալ եղե ոչ պակաս ցնորում» ինչ զերաբերում է թ. 1687, թ. 1657 և թ. 1381, նոցա մէջ Ե. լեզանակի անուն ամեննին չկալ, ալ Դ.-րդին անմըջապէս յաջորդում է Զ.-րդը. իսկ թ. 1683 և թ. 524 օրինակների մէջ Ե.-րդի խորագիրն է «Հինդերորդ՝ կրկին անդամ ընդդէմ կալ Հալոց պատերազմաւ թագաւորին Պարսից» և Լ.-րդինն է «Եւթներորդ լեզանակի, լորում կարդադրի դարձեալ առաքինութիւնն Հալոց և չարագոյն ևս երեկի անօրէնութիւնն Վասակալու Ըստ ալսմ՝ ինչ որ 1, 2 և 5 օրինակների մէջ Զ. լեզանակ է, 6 և 7 օրինակներում նշանակուած է իրուն Ե.-րդ, և այն, ինչ որ 1, 2 և 5 օրինակների մէջ է. լեզանակ է, 6 և 7 օրինակներում մնում է զարձեալ Լ.-րդ. ուրեմն 6 և 7 իսկապէս Զ. լեզանակ չունին, Գալով թ. 1685, «որ զրուած է 1207 թուին, կը տեսնենք, որ ալստեղ Ա. Բ. Դ. Դ. և Դ. լեզանակները նման են 1, 2 և 5 օրինակներին, Յ. և Զ. լեզանակները 6 և 7 օրինակներին, իսկ է. րդի փոխարէն զրուած է Յ.-րդի խորագիրն ախաղէս. Ավրատաքոյ Վ. և եղանակին Ե-Ա-Ն-Ե-Ր-Շ դարձեալ վասն նորին պատերազմի և շարչարանաց սուրբ քահանալիցնու Ալս ցոյց է տալիս, որ ութերորդ օրինակը ճանաչում է միայն վեց լեզանակ և արտաքոյ վեցի եօթներորդ, որի բովանդակութիւնը սակալն մեղ ծանօթ Լ.-րդինն է»:

Զեռազրների ալս ցուցումներից լետոլ անցնենք ապագիր օրինակներին:

Թէպէտն մենք տեսած չենք անդրանիկ տպագրութիւնը, բայց չենք կարող չհաւատալ 1828 թուին Վ. Անհատիկում լուս տեսած օրինակի հրատարակիչներին, որոնք լատնում են թէ նոյն անդրանիկ տպագրութեան հրատարակիչն էլ լիշում է, որ ոչ մի զրչագիր օրինակի մէջ հինգերորդ հեղինակի խորագիր չկալ եղել և որ հինգերորդի վերալ նշանակուած է եղել վեցերորդի խորագիրը, և հինգերորդ ու վեցերորդ լեզանակների բնագիրն անընդհատ, առանց որևէ բաժանման նշանի, շ-

բունակում է եղել իրեն միապաղաղ մի հատուած մինչեւ եօթ-ներորդ խղանակը։ Նոյն անդրանիկ հրատարակիչն այս էլ է լաւառած եղել, որ միայն մի գրչագիր ունեցել է Ս. խղանակ այն էլ Զ-րդի խորագրով։ ալդ պատճառով և նա ինքը բաժանել է Զ. լեզանակն երկու մաս, անուանելով Ա. մասն Ս. խղանակ և Բ. մասն Զ-րդ *):

Այս աեղեկութիւնից ակներն է լինում այն, ինչ որ փոքր ինչ լառաջ դիտել առուինք։ Մեղ ծանօթ չէ այն ձեռագրի թը-ականը, որից գաղափարել է անդրանիկ հրատարակիչը։ Կ. Պօլի երկրորդ տպագրութեան **): լառաջաբանում ասուած է որ անդրանիկ հրատարակութիւնն եղել է մի հատիկ վատ օրինակից [«ունելով առձեռն պատրաստ զմիմբախն գաղափար աղաւաղ և սխալ»]։

Մեր ձեռքի տակ կալ և մը այլ ցուցումն Սղիշէի երկ-ըրորդ տպադրութեան հրատարակիչը նորագէս լաւանում է թէ «խորագիր հեղինակին հինդերորդ գլխուն չէր լորինակին»։ ալդ տպագրութիւնը լուս տնաւա Ս. Պետերբուրգում 1787 թուին։ նորա մէջ Տ. լեզանակի խորագիրն «Յարձակումն արևելեալց» միակագծի մէջ է՝ իրեն բնադրում չեղած բան։ Ժամանակով ալդ հրատ որակութիւնն հեռու չէ առաջինից։ սակայն ակնե-րն է, որ Կ. Պօլսի և Ս. Պետերբուրգի հրատարակիչները, չնակելով իրենց տեղերի հեռաւորութեանը, միևնուն տեղեկու-թիւնն ունին Տ. լեզանակի մասին։ Այլ կերպ ասած, ԺԼ-րդ դարու բանասէրներին ծանօթ է եղել, որ Սղիշէի պատմու-թեան Տ. լեզանակը պակաս է, ուստի դեռ այն ժամանակ նո-քա հետաքրքիր են եղել բացատրելու ալդ երևոլթը։ Այսպէս՝ Ս. Պետերբուրգի հրատարակիչը կարծում է, որ Տ. լեզանակի հետ խորագիրն է պակաս, և ալդ պատճառով Տ. և Զ. լեզա-նակիներն իրար հետ մրացած են եղել Զ-րդի խորագրի տակ ***։

*): «Որպէս և Բիւզանդացոց առաջին տպագիրն աղդ առնէ, խո-րագիր հինդերորդ լեզանակի չի և ոչ ի մի գրչագիր, այլ վեցերորդ զայն մակաղորին նորին վեցերորդին վերնադրովն և միանես առանին մինչեւ ցեւթներորդն, բայց միայն ի միու, որ հինդերորդ կօշէ զայն, սակայն և նա նորին վեցերորդին մակագրովն»։ Տ. նղիշէ, տպաւած Վինստ. 1828։

**): «Պատմութիւն նահատակութեան սրբոց Վարդանանց և Դե-ռնդեանց քահանակից» Կ. Պօլս. 1823։

***): «Մեր չեղեալ ձեռնհաս սուրբ գրքուս կրկին օրինակաց՝ ու-նելով զսիղճ մուաց՝ ոչ սակաւ տարժանեալ եղէ (օօ. թէ դուցէ զլուկան

Ս. Պետքըուրդի ալս հրատարակութեանն լաջորդեց 1823 թուին կ. Պօլսի երկրորդ ասլագրութիւնը, որ վերը նշանակուեցաւ։ Աղբիանուապուեցի Պօլսու պատրիարքն իւր համառօտ լառաջարանի մէջ լիշում է, որ նորա բնագիրը լուս տիսաւ նորոգ սրբադրութեամբ «ըստ ընտրելապոյն և անսիսալ դաշտափարին», որ 1781 թուին մի հնագոյն օրինակից հանել է Պալատցի դպիր Գէորգը. վերջինս իւր լիշտատակարանում լալտնում է, որ իւր նախագաղափարը զրուած է նղել Արարատեան աշխարհում Հալոց Աֆջ (1167) թուին Ս. Ներսէս Շնորհալու հալրապետութեան օրով. Քանի որ ալդ հրատարակութիւն մէջ դրչագրի ալլ հանդամանքների մասին տեղեկութիւններ չկան, պէտք է մտածենք, որ տպագիրն համեմտա է գաղափար ընտրուած դրչագրին։ Ակսուղ և. լողանակի խորադրի մասին ոչ մի խօսք չկալ. սակայն վերջում մի լաւելուած կալ, որ առնուած է Թովմալ Արծրունու պատմութիւնից. երկու մասից է բաղկացած ալդ լաւելուածը. առաջինն սկսում սրաց իրբն եղան մնեց պատերազմու և վերջանում է ցուցանեմ քում ուսումնասէր քաջամռութեանդ, իսկ երկրորդն սկսում է սվասն արիւնանեղին Բարձումալի ընդժամանակս Պերոգի։ և վերջանում է չի սալրելու Բարսումալի ամբարշտի խօսքերով. Նոյնը տեսնում ենք և թ. 1687 ձեռագրի մէջ, որտեղ վերջում կալ լաւելուածս «ի պատմութենէ Թովմալի վարդապետի» ճշդիւ ալնպէս, ինչպէս լիշուեցաւ։ Այս լաւելուածի ներկալութիւնը միթէ ակնարկ չէ ալն կասկածի մասին, որ գոլութիւն է ունեցել Եղիշէլի պատմութեան պակասի նկատմամբ և որի աղջեցութիւնից չեն նողոպրել 1823 թուի հրատարակիչներն, աչքի առաջ ունենալով և իրենց ձեռքի տակ եղած դրչագիրը։ Կ. Պօլսի 1823 թ. տպագրութեան մէջ խօսք չկալ ամեններն 1787-ին Ս. Պետերբուրգ և 1813-ին և. Պօլիս տպուած օրինակների մասին։

1828-ին լուս տիսաւ Վենէտիկում Եղիշէլի պատմութեան մի նոր օրինակ տարբեր ընթերցուածների հետ միասին։ Ալդ ժամանակ արդէն գոլութիւն, ունէին ոչ միայն մեր լիշած երեք տպագրութիւնները (1764, 1787 և 1823), ալլեւ մի քանչի ու-

ալն պակասեալ իցէ, թէկ ըստ իմն իմացման խորադիրն ալն ինչ սոսկ հատեա, զէթ վեցերորդինն է անդ մուծեալ, ուստի ըստ խոստման սրբուն եղեւ կարգազեեալ։ Տ. Դիրք որ կոչի Եղիշէլ պատմագիրք, և ալն, 1787, Ս. Գետ. եր. 408։

ըիշները, որոնք մննք տեսած չենք և որոնք դուցէ ծանօթ չեն Մխիթարեան հալրերին, և խկապէս զարմանալի չեն, որ աղպիսի հրատարակութիւնների մէջ են, ոչ միայն Նոր Նախիջնանի 1787, Կ. Պուի 1813 և Կալկաթայի 1816, առ մինչեւ անգամ Վենէտիկու 1825 թուի տպագրութիւնները, Մենք չեզ գիտենք, թէ ինչու Մխիթարեանները բոլոր եօթն հրատարակութիւններից վիշտում են միայն երեքի մասին՝ այն էլ առանց նշանակելու թէ լատկապէս ո՞րը Նոքա իրենց նոր տպագրութեան համար բնագիր ընտրել են 1671 թուին գըրուած մի օրինակ, որն այն ժամանակ իրենց ձեռքի տակ զըտնած հնագոյնն էր. սակայն նոքա ունեցել են նաև երկու ուրիշ ձեռագիր 1697 և 1758 թուերին գրուած, որոնցից վերջնը հրատարակիչների տակ լուսակաց 1167 թուի գրչագրից է հանած, թթէ այս աղապէս է, մննք ունինք ուրեմն 1167 թուեկանից երկու տարրեր գրչագրներ, մէկը 1758 և մէկ 1781 օրինակուած, որոնք տպուեցան 1823 և 1828 թուերին, առաջինը գրեթէ անխառն, խակ երկրորդը բաղդատութեամբ ուրիշ օրինակների, 1828-ի հրատարակիչները ծանօթութեան մէջ լաւանեցին այն, ինչ որ վերեն լիշտուեցաւ և վեղանակի մասին, միննոն ժամանակ նոքա չուզեցան շեղուիլ նախորդ երեք տպագրութիւններից, որոնց մէջ լեղանակների դասաւորութիւնն և խորագիրն Սղիշէի բնագականին համեմատ են. «Մեր ըստ լուռաջաբանի մատոնագրին մակագրեալ զան (Յ. Խել), ասում են նոքա, զգուիս վեցերորդին չկամեցաք առ ժամանակակից յարեց յառաջնորդ ուն զնու ողութը բեւենցն.» իսկ կամենալով թիւրիմացութիւնը պարզել և անկարող լինելով, նոքա միմիայն ալսպիսի հարցեր են տալիս. «Հինգերորդ լեղանակն Բնքն արդեօք կորուսեալ իցէ, կամ ի Բարձումալէ խորամանկեալ, եթէ զըուիս վեցերորդին ալսր անզը անկեալ վտարանդին» հարցեր, որոնց լուծումը նոցա համար ևս առաւել զըժուարին էր, քանի որ նոքա համոզուած էին թէ «Կարդ պատմութեանն, Եղէտե անցնէկոտ, չտալ ինչ հաւասարի գիտելու» Ալսպիսի հարցեր տալով, Մխիթարեան հրատարակիչները կողմնակի լաւտնում են իրենց համոզումը Սղիշէի պատմութեան բնագրի թերի լինելու մասին, ևս այս ամենից լետոյ զարմանալի չէ, որ հայ և օտար բանասէրների մէջ ընդհանրացաւ նոցա տեսութիւնը Գերմանացի հալագէտն Նիւմանն Սղիշէի վերալ խօսելու ժամանակ ասում է, որ նորա-

պատմութեան մէջ հայոցէս, ինչպէս որ այն հասել է մեղ, բաց տեղ չկալ, թէև բոլոր զրշագրների մէջ հինգերորդ լողանակը պահպան է օնա. զիտէ և այն, որ անդրանիկ հրատարակիչն երկու մաս է բաժանել Զ. լողանակը, և ալդ է համարում պատճառ, որ միւսների համեմատութեամբ Ն, և Զ. լողանակներն համառոտ են. իսկ թէ արդարեն մի զլուխ (լեզ.) պակաս է բնագրից, և ինչ պարունակութիւն է ունեցել այն նիւա մանը դժուարանում է որոշնել. նա միայն կարծում է, որ Սղիշէի պատմութեան գրչեալ օրինակները բնագրի միւս մասերում ունին նստածնաւոյ ազմառութեց, և ինքն արդպիսիների մասին վիշել է, ինչպէս ասում է, իւր ծանօթութիւնների մէջ, որոնք նա կցել է Եղիշէի անզզիներէն թարգմանութեանը. *) Մի ալլ գերմանացի հայագէտ, Ֆէթթէ Կրկնում է Նիւման. Նի խօսածն Ե. լողանակի մասին, բայց որովհետեւ հին տպագրութիւնները ձեռքի տակ չընաի, իսկ նորերն ալդ մասին բան չեն լիշում, ինքն էլ լուսութիւն է պահպանում. Նորա այն նկատողութիւն հանդէպ Հ. Տաշեան պէտք է համարում լաւունել թէ 1764 թուի տպագրութեան մէջ «տեղ մ ալ ակնարկութիւն չկալ, թէ հինգերորդ զլուխն իւր ձեռադրին մէջ կը պակասէր և թէ հրատարակիչն վեցերորդին մէկ մասն հինգերորդ գլուխ հաշուած ըլլալո» Նորա ալս որոշ ցուցումն **) անջուշտ, հիմնուած է 1764 թ. տպագրի անմիջական ծանօթութեան վերալ, ալնպէս, որ ալժմերկու անհաշտ մտքեր դիմադէմ են դրուած. Վենէտիկու հայրերը հրատարակում են, որ 1764 թուի տպագրութեան մէջ զեկուցուած է Ն. լողանակի պակաս լինելու և Զ. բդի երկու մաս բաժանուած լինելու մասին, իսկ Հ. Տաշեան ընդհանբառակը պնդում է, որ այն հրատարակութեան մէջ ալդպիսի բան չկալ. Չենք կարող մտածել, թէ քննակառելի կէտի նկատմամբ տարբեր ազբիւրներ լինէին մէկի կամ միւսի ձեռքը. կը մնալ սպասել, որ ժամանակը մեղ համար պարզէ Վենէտիկու հրատարակիչների նկատմամբ ալս թիւրիմացութիւնը զմռուանանք որ Պողոս պատրիարքի խօսքերից էլ է երեւմ, որ անդրանիկ տպագրի նկատմաշա-

*) 8. „Versuch e. Geschichte d. Armenischen Literatur, von C. Neumann. Leipzig 1836“ և „History of Vartan etc, by Elisaeus, London 1830“.

**) 8. Հայկակ. աշխատ. հայագէտ Ֆ. թթէրի, Վիէննայ 1895, եր. 1.0 ձնթ.

փարը միայն մի վատ՝ օրինակ է եղել, ինչպէս վերևն արդէն վիշտեցաւ. Մեղ զբաղեցնող հարցի վերաբ լետագալ հրատարակութիւնները գրէմէ ոչ մի նոր բան չեն լայտնում, բացառութիւն է միայն Անձնացեաց օրինակը, որ լուս տեսաւ 1861 թուին Թէզառսիմալում. մինչ ցալս ծանօթ զրչաղջների մէջ այդ օրինակն, անկատկած, հնագունն է, ինչպէս կարելի է հաւաստի լինել հրատարակչի ներածութեան մէջ բերուած տեղեկութիւններից. սակայն ալս էլ ունի իւր քննադատելի կող, մերը. իդանականների խորագրի նկատմամբ կան բաներ, որ նըման չեն, ինչպէս կը տեսնենք լետով, մեզ ծանօթ միւս օրինակներին. հին դրչադրինն են արդեօք ալդ տարրերութիւնները թէ նորամուտ, չնոք կարող ասել քանի որ հրատարակիչն ալդ մասին լուս է:

Այժմ տեսնենք թէ ինչպէս է կազմուած Եղիշէի պատմութիւնն և որքան անթերի է ալն:

Գիրքն սկսում է մի ընծառականով, որից իմանում ենք թէ Եղիշէն «Հաւոց պատերազմը» պատմութիւնը զրել է «Դաւիթից Մամիկոնի» հրամանով: Անշուշտ, նա իւր ալդ ընծառականը զրել է պատմութիւնն աւարտելուց լետով, ալ կերպ անհասկանակի են «Ջրանն, զոր պատուիրեցներ, արարին. «Անա նշանազրեցի» ակարգազրեալ և եղեալ ծարավիր պարագմբ» *) և ալն խօսքերը. իւր ձեռնարկութեան նախապատճառի հետ խօսելով, Եղիշէն պարզապէս դնում է նորա առջն մի վերջացած, ամբողջացած գործ: Թէ արտաքին ձեռվ և թէ ներքին բոլանդակութեամբ ալդ գործի մասերն ալնքան որոշ էին, որ հեղինակը կարող էր զրել. «Անա նշանազրեցի չամ եօթն իդանակիս՝ առաջին դժամանակսն, երկրորդ զի՞րացն պատահումն իշխանէն արևելից, երրորդ զմիաբանութիւն ուխտին եկեղեցւոյ, չորրորդ զերկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմրն ուխտէ, հինգերորդ զիարձակումն արևելից, վեցերորդ զբնդդիմանալն Հալոց պատերազմաւ, եօթներորդ զերկարումն իրացն խռովութեան»: ալդ եօթն զլուխների մէջ և լիովին պատկերացրուցած է եղել հեղինակը «զսկիզբն և զմիջոցն և զկատարածնոյ: Մենք իրաւունք ունինք մտածելու, որ իւրաքանչիւր իդանակի խորագիրը բնագրի մէջ ալն:

*) պարապմամբ, 1174 թ. զրչագրում է պատահմամբ. իսկ Կ. Պոլսի 1813 թ. օրինակում պատահմամբ Հալկաղեան բառզերեն ծանօթ վերջինս, որ և նախադատելի է իմաստին համեմատ.

է սղել, ինչ որ Սղիշէն դրել է իւր ընծալականում, ալսինքն ա, ժամանակքն, բ, իրացն պատահումն լիշտանէն արևելց, գ, միաբանութիւն ուստին եկեղեցւոյ, դ, երկողառակութիւն քաժանելոց ի նմին ուխտէ, ե, լարձակումն արևելեալց, զ, ընդդիմանալն Հալոց պատերազմաւ, և է, փրկարումն իրացն խոռվութեան. Բոլոր ալս եօթն մասերի մէջ ներքին սերտ կապն, և կիղըը, միջոցն և կատարածն», ակներե է. և ալս պիսի խիստ կարգաբանութեան արգասիք է սղել Սղիշէի պատմութեան սկզբնական բնագիրը.

Մեղ ծանօթ դրչագիր և տպաղիր օրինակներում լեղանակները մակաղրուած են ընծալականին համեմատ, բացառութիւն են հետեւեալը.

Դ. լեղանակի խորագիրը ճիշդ է միմիալն Անձնացեաց օրինակի մէջ, «երկպառակիութիւն բաժանելոցն ի սուրբ ուխտէն», այն ինչ միւս օրինակներումն է «վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց», Մեր կարծիքով ալս վերջին խորագիրը հեղինակինը չէ, քանի որ ընծալականի մէջ չկալ:

Զ. լեղանակի խորագիրը բոլորի մէջ էլ անճիշդ է, Անձնացեաց օրինակն ունի «Պատերազմն Հալոց», իսկ միւս օրինակները «Վրկին անդամ ընդդէմ կալ Հալոց պատերազմաւթագաւորին Պարսից» Ակներեն է, որ «Վրկին անդամ» խօսքերն անստեղի են, քանի որ թէ Զ. լեղանակի բովանդակութեանն և թէ ընծալականի ցուցմանն հակառակ են. չթ որ վերջինիս մէջ լիշուած է միալն «ընդդիմանալն Հալոց պատերազմաւ»:

Է. լեղանակի խորագիրը միմյալն Անձնացեաց օրինակումն է ճիշդ, այն է «Յերկարումն իրացն խոռվութեան». իսկ միւս օրինակներն ունին «Եօթներորդ լեղանակ, լորում նկարագրի» (ալլ օր. «Վարդագրի») զարձեալ առաքինութիւնն Հալոց և չարագոլն ևս երեի անօրէնութիւնն Վասակար», Այս վերջին խորագիրը չկալ ընծալականի մէջ և մեղ թւում է նորամուտ, որովհետև ընծալականին և Զ. լեղանակի իմաստին համեմատ է միալն Անձնացեաց օրինակի խորագիրը:

Սղիշէի պատմութեան ընծալականի արդ սկզբնական մասի արժանահաւատութեան և նոխնականութեան վերալ մննք տարակուս չունինք, ինչպէս որ բնագիրն ինքն էլ ցոլց է տալիս: Աչքի առաջ ունենալով և ալն, ինչ որ ասուեցաւ լեղանակների տարբեր խմբագրութեան վերալ, մննք գալիս ենք

այն եղրակացութեան, թէ Նղիշէի պատմութեան բաժանում՝ ներն և խրաքանչլորի խորագիրը իւր նախնական վիճակի մէջ արագէս է եղել. Ա. Ժամանակիքն, Բ. Խրացն պատահումն կիշխանէն արևնելից, Գ. Միաբանութիւն ո. ուստին եկեղեց. Լոյ, Դ. Նրկապուակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ. Ե. Յարձակումն արևնելեալց. Զ. Ընդդիմանալ Հալոց պատերազմաւ և Ե. լերկարումն իրացն խռովութեան:

Այս ամենից լետոյ հարկ է պարզել այն խնդիրը, թէ բոլոր լեղանակների բովանդակութիւնն համապատասխան է իրենց խորագրին:

Այս խնդիրը պարզելուց լառաջ պէտք է լիշել, որ Եղիշէի պատմութիւնն անաղարտ հասել չէ մնդ. Նորա մէջ տեղ են գտել ներմուծումներ, լապտումներ, թերևս և տեղափոխութիւններ, նմանապէս լատուկ անունների, բառերի և դարձուածների աղճառումներ և ալլն. Սակայն խնդիր հանելով լեղանակների խորագրի և բովանդակութեան մէջ կապ էլինելու մասին, մննք ամեննեին մոռադիր չենք խօսել ալդպիսի փոփոխութիւնների վերալ. Մենք գործ ունինք Նղիշէի պատմութեան ամբողջի հետ և կամնում ենք համոզուել, որ բնագրի մէջ աենալիսի պակաս տեղ չկալ, որ պատմական բաժանդակութեանը վնաս պատճառէ:

Ալդ կողմից հարցը մեզ համար շատ պարզ է. Բոլոր լեղանակների բովանդակութիւնը համեմատ է նոցա խորագրին բայց Ե-ՌԵՒ, Վ-ԵՐՋԻՆԻՍ ճակատին գրուած է «Յարձակումն արևնելեալց»: Խրաքանչլոր ոք մեզանից սպասում է, որ հեղինակն ալդ խորագրի իմաստին համեմատ պատմէ պարսից բանակի Հայաստան գալն և նորա գործողութիւնները. Սակայն երբ ուշի ուշով հետեւելու լինենք Ե. լեղանակի բովանդակութեանը, կըտեսնենք, որ այնտեղ շատ հարևանցի և համառու լիշում է միայն պարսից զօրագլխի և բանակի Հեր և Զարեանդ հասնելը, այնտեղ նստելն և այնտեղից Հալոց գաւառների վերալ ասպատակներ արձակելը, իսկ Հալոց բանակի կողմից Առանձար Ամասունու զուրս գալն երկու հազար մարդով (ըստ Փարպ. 300 մարդով) և ալդ ասոլատակներին բետ մղելը, շտուերին ջարդելն և մնացածներին փախուստի ստիպելը: Անպէս որ՝ բացի ալս դէպքից, որի նկարագրութիւնը միայն 17 տող բան է (տպ. Վ-ԵՆԿԱ, 1859), ուրիշ անպիսի պատմութիւն չկալ, որի ճակատը կարելի լինէր մա-

կագրել և Յարձակումն արենել եացցաւ Ընդհակառակն Ս. Խեղանակի մէջ պատմուած է ս. Վարդանի Արտազ հասնելն, ախտեղ իւր բանակն լարզարելը, և Վաստիկի ջանքը սուտ քահանաների միջոցով ուխտապահներին խարելու նմանապէս նոյն լեղանակի մէջ ընդարձակ են գրաւում ս. Վարդանի ճառը և ս. Գևոնդի քաջալերական խրատն ու բացարութիւնը՝ Հալոց բանակի և Վաստիկի պատղամաւորների առջև Ալս ամէնը մասն է Զ-րդ լեղանակի, որի սկզբնական խօսքերն սեետ ալսորիկ իրդե ետևս զօրավար գնդին Պարսից, եթէ հաստան պատղամաւորք ի միջու և ալլն, պարզապէս շարունակութիւն են նախընթաց պատմութեան, որով վերջանում է Ե-րդ կոչուած լեղանակը։ Մեր խօսքին իրդե հաստատութիւն են այն ձեռագրները, որոնք չունին Ե-րդ լեղանակ (տ. վերևն 1—5)։ Նոցա մէջ Դ. Բ. ըդ լեղանակից լետու անմիջապէս լաջորդում է Զ-րդը, որի սկզբնական խօսքերն են «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենակն մեծութիւն երկրաւոր» և վերջանում է ոչ թէ Աշաւասրեսցից մաս մեր բացադանչութեամբ, ինչպէս է տպազիր օրինակի մէջ, ալլ ավան ախորիկ և հրամանի թագաւորին վաղվաղակի ոչ կարէին հաւատալու Ալնայէս որ տպազրի Ե. և Զ. լեղանակիներն այն ձեռագրների մէջ կազմում են միայն Զ. լեղանակի, իսկ այն օրինակներում, որոնք Զ. լեղ. չունին (տ. վերև 6 և 7), և. լեղ, սկսում է «Մեծ է սէրն Աստուծոյ» և վերջանում է «Հրամանի թագաւորին վաղվաղակի ոչ կարէին հաւատալ» խօսքերով, որոնք և տպազրի Ե. Զ. լեղանակիներն են։

Ակազէս ուրեմն Նդիշէի պատմութեան բնագրից ամբողջապէս պակաս է Ս. լեղանակը, որի խորագիրն է «Յարձակումըն» արենելեացց Թէ Բնչ է եղել ալդ լեղանակի բովանդակութեան մանրամասնութիւնը, որքան ընդարձակ է եղել այն, և Բնչպէս է հանուել բնագրից, ալդ հարցերին բաւարար պատարխան տալ շատ կանուխն է։ Հարկ է նախ համախմբել նոցա վերաբերեալ տեղեկութիւններն և սպասել դուցէ ժամանակն օգնէ նոցա առաջնորդութեամբ նորանոր նկաթեր հրապարակ հանել խնդրի լուծման համար։ Ալս կը մնալ մի ալլ անգամի։

Ա. Ա.

15 դեկտ. 1901

Աւելանդուարու

Յ. Գ. Դնում ենք ալստեղ Աղիշէի գրականութեան վերաբերեալ կարեոր աղբիւրները, նոցա լիակատար ցանկը թողնելով ուրիշ աւելի պատեհ ժամանակի.

ա. Տպագրութիւնները. Կ. Պօլիս 1764, 1813, 1823, 1866 և 1871.—Ս. Պետերբուրգ 1787.—Նոր-Նախիջևան 1787 (1774). Կալկաթա (թէ Մադրաս) 1816.—Վ. Բնետիկ 1825, 1828, 1832, 1838, 1840, 1852, 1859, 1864 և 1893—թէողոսիա 1861.—Մուկով 1861 և 1892.—Երուսաղէմ 1865.—Զմիւռնիա 1867.—Տիֆլիս 1879 և Փարիզ (թուակ. անձանօթ).—ա. Bibliotheca Caucasia et Transcaucasica. I. M. Մանսարով, 1876 C.II.B. եր. 519.—Հայկակ. Մատենագիտակնչութեան 1883, եր. 167.—Գ. Խալաթեանց, Եղիշէի Վարդանանց պատմ. հրատ. Խ. Յովհաննիսեանի, Թիֆլիս 1892.—Teza E' La Storia dei Vartaniani etc. Roma 1893 (նորնը անս Բաղմավէպ 1893 եր. 513).—

բ. Աշխարհաբար թարգմանութիւնները. Մ. Սիմէօնեանց, 1863 Մոսկով. Հ. Պուկասեանց, 1891 Թիֆլիս (տ. մատենախօս). Հ. Յ. Տ. Հանդէս Ամսօրեալ 1892).—Եղիշէի ուսումնասիրութեան նպաստ «Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց» 3 զիրք, Կ. Կոստանեանցի, 1877 Վ.իէնա (տ. մատենախօս). Գրիչ, Փորձ 1877 դ. Արարատ 1878 և ալլն).

գ. Օտարակեզու թարգմանութիւնները. անդղիերէն Neumann C. 1830 London, իտալերէն Cappelletti G. 1840 Venezia, զաղղիերէն Kabaradgy G. 1840 Paris, Langlois V. 1868 Paris ոռումերէն Ռանշևի Ա. 1853 Տիֆլիս և Դուլեն Ե. 1884 Խարկով.

դ. Տեսութիւններ և ուսումնասիրութիւններ.—Հ. Գ. Զաբէ-նշէտ Պատմ. Հ. գպրութեան 1897 Վենէտիկ. —Գոբրէցւուն Ա. Քննական Պատմ. Հալաց (մասն Դ.) Թիֆլիս 1895.—Յ. Հ. Հոցունէ, Խորհրդածութիւնք Եղիշէի վերակ, Վենէտիկ 1896 (տ. նաև Բաղմավէպ 1897).—Հ. Յ. Տոշուն, Հայկական աշխատասիր. Ֆենէնէի, տ. Ազգ. մատենադարան, Վ.իէնա 1895 (տ. նաև Ցուց. Վիէն. Մի. մատենադարանի—«Եղիշ»).—Neumann C. Versuch einer Geschichte des Armenischen Literatur Leipzig 1836.—Léve F. L'Arménie Chrétienne etc. Louvain 1886.—Պարբերական հրատարակութիւնների մէջ լուս տեսած աշխատութիւններից ուշադրութեան արժանի հատուածներն են.—Կոնկրէտ Յ. «Եղիշէի պատմ. հատակոտորք» տ. Հանդ. Ամս. 1893.—Փորթուագու. Մ. «Եղիշէի պատմ. շարադրութեան ժամանակը» տ. Բաղմավէպ 1898.—Գ. Տէր-Պօղոսեան, «Նկատողութիւններ Եղիշէի պատմ. վերաբերեալ» տ. Հանդ. Ամս. 1896.—Գ. Խալաթեանց, «Եղիշէի աղբիւրների առթիւ» տ. Հանդ. Ամս. 1895, և ալլն և ալլն.